# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*19 հունվարի 2022թվականի N 18*

### *ԴԱՎԻԹ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.95409 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԻՑ 0. 28174ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 42 կետով, 35 հոդվածի 1-ին մասի 22 կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 8-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն և N1920-Ն որոշումները, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, Համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի Հրազդան համայնքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ, 2022 թվականի հունվարի 13-ի N 1/փ- 1 դրական եզրակացությունը, Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 06 որոշումը, Դավիթ Աբրահամյանի 2021 թվականի հոկտեմբերի 27-ի դիմումը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ*

*1.Հրազդան քաղաքի վարչական սահմաններում գտնվող Կոտայքի մարզի Ծաղկաձոր գյուղի 3-րդ փողոցի թիվ 10 տան բնակիչ Դավիթ Միերի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N13122019-07-0057, ծածկագիր ETT78A1W4XP1) Վանատուր թաղամասի 0.95409 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրից 0 . 28174հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսականից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը հասարակականի, առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենք կառուցելու նպատակով:*
*2. Դավիթ Միերի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ*

գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N13122019-07-0057, ցադտնաբառ՝ ETT78A1W4XP1) Վանատուր թաղամասում գտնվող 0.28174հա մակերեսով նպատակային նշանակությունը փոփոխված բնակավայրերի հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հայ Ֆիդայիների փողոց 56/1:

3. Դավիթ Միերի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող Հրազդան քաղաքի Հայ Ֆիդայիների փողոց 56/1 հասցեում գտնվող 0.28174հա մակերեսով հողամասի՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 7 985 300 (յոթ միլիոն ինը հարյուր ութսունհինգ հազար երեք հարյուր) դրամ գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001140 գանձապետական հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

19 հունվարի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*19 հունվարի 2022թվականի N 19*

## *ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից տրամադրված հատակագծերը և Արմեն Խաչատրյանի 2022 թվականի հունվարի 18-ի դիմումը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամասի թիվ 92 տան բնակիչ Արմեն Խաչատրյանին սեփականության իրավունքովպատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N13012022-07-0112, ծածկագիր՝ ZINVCKY6NIFN/ Հրազդան քաղաքիՄաքրավան թաղամաս 92 հասցեում գտնվող բնակելի տան 1000.0քմ մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մաքրավան թաղամաս 92/1, 1200.0քմ մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մաքրավան թաղամաս 92/2, իսկ 3770.0քմ մակերեսով մասինըթողնել նույնը՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մաքրավան թաղամաս 92:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*19 հունվարի 2022թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# ՈՐՈՇՈՒՄ

*19 հունվարի 2022թվականի N 20*

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Սերոժ Եղիազարյանի 2022 թվականի հունվարի 18-ի դիմումը.*

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

*1.Կոտայքի մարզի Քաղսի գյուղի 1 փողոցի 32 տան բնակիչ Սերոժ Եղիազարյանին ժառանգության իրավունքով փոխանցված /ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2022 թվականի հունվարի 17-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում N 68, ժառանգական գործ N 05/ Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի հասցեում գտնվող բնակելի տանը (կադաստրային համար՝ 07-063-051-002) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Քաղսի, 1-ին փողոց 32:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*19 հունվարի 2022թ.*
*ք.Հրազդան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*19 հունվարի 2022թվականի N 21*

*ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով դիմումատուների հայտերը և Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 07-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1. Տրամադրել ոգելից խմիչքների վաճառքի, ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի թույլտվություններ 10 /տասը/ անհատ ձեռնարկատերերի՝ համաձայն հավելվածի:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*19 հունվարի 2022թ.*
*ք.Հրազդան*

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թվականի հունվարի 19-ի
N 21 որոշման

ՑՈՒՑԱԿ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպության անվանումը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | ԱՁ Խուրշուդյան Ջինա | Կոտայքի մարզ, գ. Քասախ, 10փ, 2նրբ,տուն 7 | Ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 105/1 | ոգելից խմիչքների վաճառք , ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 2 | ԱՁ Մելանյա Միքայելյան | Ք. Հրազդան, Կճառ թաղ. տուն 41 | Ք. Հրազդան, Կճառ թաղ. 41 | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 3 | ԱՁ Մանուշակ Վարդերեսյան | Ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 88/34 | Ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 54/1 | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 50 քառ/մ, ոչ հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 4 | ԱՁ Անահիտ Մարգարյան | Ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 44ա/17 | Ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 96շենք հարող տարածք, թիվ 8 առևտրի սրահ | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 26 քառ/մ, ոչ հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 5 | ԱՁ Ինգա Զոհրաբյան | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 5/24 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 5/15 | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 6 | ԱՁ Մասիս Զաքարյան | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 228/11 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 229շ հ/տ | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 7 | ԱՁ Ռուզաննա Աբրահամյան | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 84/5 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ., 128շ, հ/տ | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 8 | ԱՁ Լիանա Շահնազարյան | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 95/26 | Ք. Հրազդան, Միկրոշրջան Բաղրամյան 9-րդ փ թիվ 1 առևտրի սրահ | ոգելից խմիչքների վաճառք | Մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 9 | ԱՁ Գեղանուշ Սարգսյան | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 85/11 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ.93/47 | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 10 | ԱՁ Քրիստինե Թավրիզյան | Ք. Հրազդան, Նոյեմբերյան փ տուն 16Ա | Ք. Հրազդան, Միկրոշրջան Դ-2 թաղ., 60 շ, հ/տ | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 26քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*20 հունվարի 2022թվականի N 22*

*ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 10 որոշումը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Սեփականության իրավունքով Անժելա Լևոնի Մկրտչյանին պատկանող Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 33 շենքի 22 բնակարանի 36.28 քառակուսի մետր մակերեսով բնակելի տարածքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N29102019-07-0118, տրված՝ 29.10.2019 թվականին) ընդունել որպես համայնքի սեփականություն:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*20 հունվարի 2022թ.*
*ք.Հրազդան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*21 հունվարի 2022թվականի N 23*

## *ԽԱՆՈՒԹԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Նինա Դավթյանի 2022 թվականի հունվարի 19-ի դիմումը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Արմավիրի մարզի Մերձավան գյուղի 1-ին փողոց թիվ 27 տան բնակիչ Նինա Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 1126479, տրված՝ 2004 թվականի հոկտեմբերի 13-ին) Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 20 շենքին հարող տարածքում գտնվող խանութին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Սահմանադրության հրապարակ 53։*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը։*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*21 հունվարի 2022թ.*
*ք.Հրազդան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*21 հունվարի 2022թվականի N 24*

## *ԱՎՏՈՏՆԱԿ-ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Ռոբերտ Միրունյանի լիազորված անձ Ռոմիկ Միրունյանի 2022 թվականի հունվարի 18-ի դիմումը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Ռոբերտ Միրունյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 1335419, տրված՝ 2004 թվականի փետրվարի 17-ին) Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 61 շենքին հարող տարածքում գտնվող ավտոտնակ-արհեստանոցին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 61/12:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*21 հունվարի 2022թ.*
*ք.Հրազդան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*21 հունվարի 2022թվականի N 25*

### *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՍՊՈՐՏԻ, ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ԺԱՄԱՆՑԻ ՇԵՆՔԻ՝ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԴԱՀԼԻՃԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 3-րդ կետի և որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով 2022 թվականի հունվարի 17-ին <<Հաբշին նախագիծ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված շինության հատակագիծը և Ռաֆայել Հակոբյանի 2021 թվականի հոկտեմբերի 14-ի դիմումը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Օրինական ճանաչել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 77 շենքի թիվ 26 բնակարանի բնակիչ Ռաֆայել Սամվելի Հակոբյանի կողմից Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 77/17 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 11102021-07-0019, գաղտնաբառ՝ MEB4AQFISK2C) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցած 28.01քմ արտաքին մակերեսով սպորտի, հանգստի և ժամանցի շենքը՝ սպորտային դահլիճը՝ օրինականացման վճարը սահմանել 110 400 (մեկ հարյուր տասը հազար չորս հարյուր) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504 գանձապետական հաշվին:*

*2. Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 77/17 հասցեում գտնվող սպորտի, հանգստի և ժամանցի շենքի՝ սպորտային դահլիճի համար նախատեսված 28.01քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատումից փոփոխել հասարակականի:*

*3.Կառույցների պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու*

առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:

5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

21 հունվարի 2022թ.
Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*21 հունվարի 2022թվականի N 26*

## *ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 1539 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Հրազդան համայնքի ղեկավարի 2021 թվականի նոյեմբերի 16-ի «Առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի ինքնակամ կառուցած մասի օրինականացման և միջնորմների ձևափոխության մասին» N 1539 որոշման 1-ին կետում ««դրամ» բառից հետո լրացնել «ինքնակամ կառուցած 9.3քմ արտաքին մակերեսով մասը՝ օրինականացման վճարը սահմանել 36 700 (երեսունվեց հազար յոթ հարյուր) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504 գանձապետական հաշվին» բառերը:*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*21 հունվարի 2022թ.*
*ք.Հրազդան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*21 հունվարի 2022թվականի N 27*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի N 1085 ԵՎ N 1086 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ ՝*

*1.Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 13-ի «Ինքնակամ կառուցված հանգստյան տնակի, հարթակի, հենապատի և ինքնակամ բացած պատուհանների օրինականացման և բնակելի տան գործառական նշանակությունը փոփոխելու մասին» N 1085 որոշումը:*
*2.Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 13-ի «Ինքնակամ կառուցված հանգստյան տնակի, կաթսայատան, հարթակի և հենապատի օրինականացման և բնակելի տան գործառական նշանակությունը փոփոխելու մասին» N 1086 որոշումը:*
*3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*21 հունվարի 2022թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*21 հունվարի 2022թվականի N 28*

*ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 8-րդ կետերով,հիմք ընդունելով դիմումատուների հայտերը և Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 07-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1. Տրամադրել ոգելից խմիչքների վաճառքի, ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի, ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման, հանրային սննդի կազմակերպման և իրականացման, ժամը 24-00-ից հետո աշխատելու և սեղմված բնական գազի վաճառքի թույլտվություններ 21 /քսանմեկ/ անհատ ձեռնարկատերերի՝ համաձայն հավելվածի:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*** ***Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*21 հունվարի 2022թ.*
*ք.Հրազդան*

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թվականի հունվարի 21-ի
N 28 որոշման

**ՑՈՒՑԱԿ**
**ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպության անվանումը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | ԱՁ Գաբրիելյան Բաղենիկ | Ք. Հրազդան, Վանատուր թաղ. 52 | Ք. Հրազդան, Վանատուր թաղ. 52 | ոգելից խմիչքների վաճառք , ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 2 | ԱՁ Բաղրամյան Անուշ | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 75/17 | Ք. Հրազդան, Վանատուր թաղ. 283 | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 3 | ԱՁ Եսայան Արմեն | Ք. Հրազդան, Սպանդարյան փող. տուն 36 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 12-րդ դպրոցին հ/ա | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 4 | ԱՁ Վարդանյան Ռոմելա | Ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 32/130 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 229 շենք, 1-ին հարկ | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 5 | ԱՁ Մկրտչյան Վեներա | Ք. Հրազդան, Վերին Աղյուրակ 33 | Ք. Հրազդան, Վերին Աղյուրակ 33 | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 6 | ԱՁ Ալեքսանյան Սոնյա | Ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 2Մ 4-րդ մասն. 55 բն. | Ք. Հրազդան, Կենտրոն թաղ. 2Մ հանրակացարան հ/ա | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 7 | ԱՁ Մելքոնյան Մարիամ | Կոտայքի մարզ, գյուղ Լեռնանիստ 1-ին փ. տուն 35 | Ք. Հրազդան, Կենտրոն թաղ., 8շ, 1-ին հարկ | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 8 | ԱՁ Խաչատրյան Մարգարիտ | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 311/11 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ., 311 շ, 1-ին հարկ | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 9 | ԱՁ Կիրակոսյան Մարինե | Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի 2-րդ փ., 1-ին փկղ, տուն 10 | Ք. Հրազդան, Կենտրոն թաղ. շ35, 1-ին հարկ | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 10 | ԱՁ Ռոզա Շահբազյան | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 56/4 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ., շենք 56ա, 1-ին հարկ | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. հունիսի 30-ը՝ առաջին կիսամյակ |

| 2/2 | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպության անվանումը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 11 | ԱՁ Իսրայելյան Նարինե | Ք. Հրազդան, Վանատուր թաղ. 310 | Ք. Հրազդան, Վանատուր թաղ.378 | ոգելից խմիչքների վաճառք , ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. հունիսի 30-ը՝ առաջին կիսամյակ |
| 12 | ԱՁ Գևորգյան Մուշեղ | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 91/33 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. , Բաղրամյան 9, թիվ 4 | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. դեկտեմբերի 31-ը՝ տարվա համար |
| 13 | ԱՁ Ղազարյան Ներսիկ | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 50/24 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 88 շ., 1-ին հարկ | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. դեկտեմբերի 31-ը՝ տարվա համար |
| 14 | ԱՁ Անդրեասյան Գարեգին | Ք. Հրազդան, Նարեկացու փ, տուն 27 | Երևան-Սևան 40 կմ | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում, հանրային սննդի կազմակերպում և իրականացում | Մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 15 | ԱՁ Վարդանյան Միլվա | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 204/25 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. , Խնկյան 18 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | Մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 16 | ԱՁ Մինասյան Լուսինե | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 88/47 | Ք. Հրազդան, Միկրոշրջան Բաղրամյան թաղ, Պուշկինի փ. 36 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | Մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 17 | ԱՁ Միքայելյան Արման | Ք. Հրազդան, Վանատուր թաղ. 40 | Ք. Հրազդան, Վանատուր թաղ., Հայ Տիգրանների փ. | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | Մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. դեկտեմբերի 31-ը՝ տարվա համար |
| 18 | <<Գուդվին-Բեռ>> ՍՊԸ | Ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 48/3 | Ք. Հրազդան, Բաղրամյան թաղ., Զ. Անդրանիկի պող. թիվ 140/1 | ժամը 24-00-ից հետո աշխատելու /միջոցառումների կազմակերպում/ | հիմնական շինություն | Մինչև 2022 թ. դեկտեմբերի 31-ը՝ տարվա համար |
| 19 | <<Դանիել Ա>> ՍՊԸ | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 213/25 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ., Ջրվարեր ճանապարհ 4 | ժամը 24-00-ից հետո աշխատելու /ցանկալան/ | հիմնական շինություն | Մինչև 2022 թ. դեկտեմբերի 31-ը՝ տարվա համար |
| 20 | <<Դանիել Ա>> ՍՊԸ | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 213/25 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ., Ջրվարեր ճանապարհ 4 | սեղմված բնական գազի վաճառք | հիմնական շինություն | Մինչև 2022 թ. դեկտեմբերի 31-ը՝ տարվա համար |
| 21 | <<Մի Փի Էս Էներջի Գրուպ>> ՍՊԸ | Ք.Երևան, Պուշկինի 1 | Ք. Հրազդան, Վանատուր թաղ., Հայ Տիգրանների 39 | ժամը 24-00-ից հետո աշխատելու /ցանկալան/ | հիմնական շինություն | Մինչև 2022 թ. դեկտեմբերի 31-ը՝ տարվա համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*21 հունվարի 2022թվականի N 29*

### *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇԵՆՔԻ, ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով, հիմք ընդունելով Արմեն Առաքելյանի 2021 թվականի հունվարի 25-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված, ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված տեխնիկական եզրակացությունը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Հարավային թաղամասում գտնվող 0624-0018 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Կամոյի փողոց 55/6:*

*2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Չարենցի փողոց թիվ 3 տան բնակիչ Արմեն Առաքելյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Հարավային թաղամաս, Կամոյի փողոց 55/6 հասցեում գտնվող1.76քմ արտաքին մակերեսով հասարակական նշանակության առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքը ճանաչել օրինական:*

*3.Առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքը և դրանցով զբաղեցված 6.7քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:*

*4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*21 հունվարի 2022թ.*
*ք.Հրազդան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*21 հունվարի 2022թվականի N 30*

### *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ , ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇԵՆՔԻ, ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿԻ, ԴՐԱՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ մասով հաստատված կարգերի, հիմք ընդունելով Արմեն Առաքելյանի 2021 թվականի հունվարի 25-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված, ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված տեխնիկական եզրակացությունը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Հարավային թաղամասում գտնվող 0624-0017 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Կամոյի փողոց 55/5:*

*2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Չարենցի փողոց թիվ 3 տան բնակիչ Արմեն Առաքելյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Հարավային թաղամաս, Կամոյի փողոց 55/5 հասցեում գտնվող109.78քմ արտաքին մակերեսով հասարակական նշանակության առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքը, 1.69քմ մակերեսով հասարակական նշանակության աստիճանավանդակը ճանաչել օրինական:*

*3.Հրազդան համայնքին պատկանող Հարավային թաղամաս, Կամոյի փողոց 55/5 հասցեում գտնվող 147.4քմ ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողերից փոփոխել հասարակական*

կառուցապատման:
4.Առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքը, աստիճանավանդակը և դրանցով զբաղեցված 147.4քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ　　　　Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

21 հունվարի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*21 հունվարի 2022թվականի N 31*

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇԵՆՔԻ, ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿԻ, ԴՐԱՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ մասով հաստատված կարգերի, հիմք ընդունելով Արմեն Առաքելյանի 2021 թվականի հունվարի 25-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված, ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված տեխնիկական եզրակացությունը.*

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Հարավային թաղամասում գտնվող 0624-0017 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Կամոյի փողոց 55/4:*

*2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Չարենցի փողոց թիվ 3 տան բնակիչ Արմեն Առաքելյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Հարավային թաղամաս, Կամոյի փողոց 55/4 հասցեում գտնվող13.27քմ արտաքին մակերեսով հասարակական նշանակության առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքը, 0.57քմ մակերեսով հասարակական նշանակության աստիճանավանդակը ճանաչել օրինական:*

*3.Հրազդան համայնքին պատկանող Հարավային թաղամաս, Կամոյի փողոց 55/4 հասցեում գտնվող 28.0քմ ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից փոփոխել*

հասարակական կառուցապատման:
4.Առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքը, սատիճանավանդակը և դրանցով զբաղեցված 28.0քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

21 հունվարի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*21 հունվարի 2022թվականի N 32*

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇԵՆՔԻ, ՊԱՐՍՊԻ, ԴՐԱՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ մասով հաստատված կարգերի, հիմք ընդունելով Արմեն Առաքելյանի 2021 թվականի հունվարի 25-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված, ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված տեխնիկական եզրակացությունը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Հարավային թաղամասում գտնվող 0624-0001 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Սպանդարյան փողոց 55/3:*

*2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Չարենցի փողոց թիվ 3 տան բնակիչ Արմեն Առաքելյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Հարավային թաղամաս, Սպանդարյան փողոց 55/3 հասցեում գտնվող70.55քմ արտաքին մակերեսով հասարակական նշանակության առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքը, 5.57քմ մակերեսով հասարակական նշանակության պարիսպը ճանաչել օրինական:*

*3.Հրազդան համայնքին պատկանող Հարավային թաղամաս, Սպանդարյան փողոց 55/3 հասցեում գտնվող 194.9քմ ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական*

*նշանակությունը բնակավայրերի այլ հողերից փոփոխել հասարակական կառուցապատման:*

*4.Առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքը, պարիսպը և դրանցով զբաղեցված 194.9քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:*

*5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*21 հունվարի 2022թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*24 հունվարի 2022թվականի N 33*

## *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ ԹԱՂԱՄԱՍԻ 41 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼԱԼԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Լալա Խաչատուրի Գալստյանի /ծնված 1990 թվականի ապրիլի 14-ին, Հայաստանի Հանրապետություն, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 14բ տնակի բնակչուհի/ 2022 թվականի հունվարի 20-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի «Մարի» համատիրության կառավարչի կողմից 2022 թվականի հունվարի 19-ին տրված տեղեկանքը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը.*

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>*

*1.Լալա Խաչատուրի Գալստյանին պատկանող 14բ տնակին տրամադրել հասցե Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Մուշ թաղամաս 41:*
*2.Վերականգնել Հրազդան քաղաքի Մուշ թաղամասի 41 հասցեում գտնվող Լալա Խաչատուրի Գալստյանին պատկանող 378.0քմ մակերեսով օրինական հողամասի և նրա վրա կառուցած 61.22 քմ արտաքին մակերեսով բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը:*
*3.Հողամասի սահմանները որոշվում են «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:*
*4.Բնակելի տունը և հողամասը համապատասխանում է քաղաքաշինական նորմերին և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:*
*5.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ*

*գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը՝ գրանցել քաղաքացի Լալա Խաչատուրի Գալստյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:*

*6.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*24 հունվարի 2022թ*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*24 հունվարի 2022թվականի N 34*

## *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ ԹԱՂԱՄԱՍԻ 41/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՈՆԱ ԱՎԱԳԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Սոնա Ավագի Թովմասյանի /ծնված՝ 1947 թվականի օգոստոսի 25-ին, Հայաստանի Հանրապետություն, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 13բ տնակի բնակչուհի / 2022 թվականի հունվարի 20-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի «Մարի» համատիրության կառավարչի կողմից 2022 թվականի հունվարի 19-ին տրված տեղեկանքը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը.*

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1.Սոնա Ավագի Թովմասյանին պատկանող 13բ տնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Մուշ թաղամաս 41/1:*

*2.Վերականգնել Հրազդան քաղաքի Մուշ թաղամասի 41/1 հասցեում գտնվող Սոնա Ավագի Թովմասյանին պատկանող 338.0քմ մակերեսով օրինական հողամասի և նրա վրա կառուցած 60.36 քմ արտաքին մակերեսով բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը:*

*3.Հողամասի սահմանները որոշվում են «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:*

*4.Բնակելի տունը և հողամասը համապատասխանում է քաղաքաշինական նորմերին և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:*

*5.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ*

գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը՝ գրանցել քաղաքացի Սոնա Ավագի Թովմասյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

6.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

24 հունվարի 2022թ
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*24 հունվարի 2022թվականի N 35*

### *ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆՄԱՔՐՈՒՄ» ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N04 որոշման 3-րդ կետը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հրազդանի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող KAMAZ 65115-D3 ЭД405 մակնիշի (նույնականացման համար՝ XOJ58041280002086, արտադրման տարեթիվը՝ 2008) ճանապարհային կոմբինացված մեքենան:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*24 հունվարի 2022թ*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*24 հունվարի 2022թվականի N 36*

## *ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՄԱՔՈՒՐ ՀՐԱԶԴԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 05 որոշումը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ</u>*՝

*1. Հրազդանի համայնքապետարանի «Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հրազդանի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող 67 000 000 /վաթսունյոթ միլիոն/ դրամ արժողությամբ KAMAZ KO-318 (KAMAZ-43253-3010-69) փոշեկուլ մեքենան /նույնականացման համար՝ XVCK04325M0000131, թողարկման տարեթիվը 2021/:*
*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*24 հունվարի 2022թ*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*24 հունվարի 2022թվականի N 37*

## *ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-րդ կետերի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 14-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուների հայտերը և Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 07-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Տրամադրել ոգելից խմիչքների վաճառքի, ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի, ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման, հանրային սննդի կազմակերպման և իրականացման, արտաքին գովազդի թույլտվություններ 9 /ինը/ անհատ ձեռնարկատերերի՝ համաձայն հավելվածի:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*     *Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*24 հունվարի 2022թ*
*ք.Հրազդան*

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի 2022 թ.
24 հունվարի N 37 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպության անվանումը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | <<Միրի>> ՍՊԸ | Ք. Երևան, Օհանովի 15/1 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի պողոտա 66 | ոգելից խմիչքների վաճառք , ծխախոտային արտադրատեսակների վաճառք | 500 և ավել քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 2 | <<Միրի>> ՍՊԸ | Ք. Երևան, Օհանովի 15/1 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. Զ. Անդրանիկի պողոտա թիվ 187 արտ | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | 500 և ավել քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 3 | <<Միրի>> ՍՊԸ | Ք. Երևան, Օհանովի 15/1 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի պողոտա 66 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | Մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 4 | ԱՁ Գրիգորյան Գրիգոր | Ք. Հրազդան, Ջրառատ թաղ., տուն 6 | Ք. Հրազդան, Ջրառատ թաղ., 4-րդ փողոց տուն 6 | ոգելից խմիչքների վաճառք, ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 5 | <<Գրես Սոնեռ>> ՍՊԸ | Ք. Երևան, Արշակունյաց 2 | Ք. Հրազդան, Սպանդարյան փ, Կենտրոն թաղ. Օգոստոսի 23 40/2, Կենտրոն թաղ. Անդրանիկի պ. 14/2, Մ/շ թաղ. 13 փ. 26, Բաղրամյան փ. | ծխախոտային արտադրատեսակների վաճառք | Մինչև 26 քառ/մ, ոչ հիմնական շինություններ | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 6 | ԱՁ Մխիթարյան Եպրաքսիա | Ք. Աբովյան Երիտասարդական փ 13/3 | Ք. Հրազդան, Բաղրամյան 5-րդ փ. 1-ին նրբ. թիվ2 | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | Մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | Մինչև 2022 թ. մարտի 31-ը՝ առաջին եռամսյակ |
| 7 | ԱՁ Հովհաննիսյան Ալեք | Ք. Հրազդան, Միքայելյան փ. 2/32 | Ք. Հրազդան, Սպանդարյան 10 | արտաքին գովազդ | 2 քառ/մ | 2022 թվականի հունվար ամիս |
| 8 | <<Դավս Գրուպ>> ՍՊԸ | Ք. Հրազդան, Նարեկացու փ. 48 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի պողոտա շենք 8, թիվ 12 | արտաքին գովազդ | 5 քառ/մ | 2022 թվականի հունվար ամիս |
| 9 | ԱՁ Մխիթարյան Եպրաքսիա | Ք. Աբովյան Երիտասարդական փ 13/3 | Ք. Հրազդան, Բաղրամյան 5-րդ փ. 1-ին նրբ. թիվ2 | արտաքին գովազդ | 2 քառ/մ | 2022 թվականի հունվար ամիս |